## Արձանագրություն N 4

**ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի քաղաքացիների սպասարկման գրասենյակի կահույքի ձեռքբերման «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/99» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

| | |
|---|---|
| *ք. Տաշիր* | «29» «հուլիսի» 2019թ<br>ժ 10:00 |
| Մասնակցում էին՝ | |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)՝ | Ս. Անախասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ) | Ն. Մուրադյան, Ս. Սուքիասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԲԱ) | Հ. Կիրակոսյան, Ա. Շահբազյան |
| Գնման պատասխանատու/Մրցույթի Համակարգող (ԳՊ/Մհմ) | Ս. Սարգսյան |

### 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

/Ս. Անախասյան/

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Բանակցությունների կազմակերպման մասին
3. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցի մասին և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին
4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

### 2. Բանակցությունների կազմակերպման մասին

/Ս. Անախասյան/

2.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/99» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակցի՝ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի և «Իրտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկները 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինների համար գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ. պարբերությունը՝ «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/99» ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի և «Իրտիգ» ՍՊԸ-ի 29.07.2019թ. ժամը 10:00-ին հրավիրվել են ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94, Տաշիրի համայնքապետարանի վարչական շենք 206 սենյակ հասցեում գների նվազեցման շուրջ բանակցությունների:

2.3 «Իրտիգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չի մասնակցել բանակցություններին:

2.4 Բանակցությունների ավարտին «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/99» ծածկագրով ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

| Չ/Հ | Անվանումը | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր | Նախահաշվային գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 7 | սերվերի և փաստաթղթերի պահարան | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | 99900 | 19980 | 119880 | 100000 |
| 8 | փաստաթղթերի և հագուստի պահարան | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | 99900 | 19980 | 119880 | 100000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

### 3. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցի մասին և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

/Ս. Անախասյան/

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշումով «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/99» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ը՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3.2 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը 7-րդ և 8-րդ չափաբաժինների համար 30.07.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով հաստատված 40-րդ կետի 5-րդ ենթակետի գ. պարբերությունը՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակիցների գնային առաջարկները 5-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ չափաբաժինների համար գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

### 4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

/Ս. Անախասյան/

4.1 «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-19/99» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշումով հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի տրամադրման հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94, Տաշիրի համայնքապետարանի վարչական շենք 206 սենյակ հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)՝ | | Ս. Անախասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ) | | Ն. Մուրադյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԳԱ) | | Ս. Սուքիասյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԲԱ) | | Հ. Կիրակոսյան |
| Գնման պատասխանատու/Գնահատման աշխատակազմի (ԳՊ/ԲԱ) | | Ա. Շահբազյան |
| Գնման պատասխանատու/Մրցույթի Համակարգող (ԳՊ/Մհմ) | | Ս. Սարգսյան |